Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԿԲԿ

ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ

1930 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 24-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ
ՅԵՐԵՎԱՆ 1930

№ 2 ՓԱՂԱՓԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 2

ЗКП1-11
2
Լրաց.
331.83(47)
А 4093

ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՑԵՐԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ 1930 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 24-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ
ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

ՀԱՅԿՈՍՊԻ ՏՊԱՐԱՆ
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 5860բ.
ՏԻՐԱԺ 5000 պ. 476

ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ 1930 Թ. ՍԵՊՏ. 24-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համկ(բ)Կ Անդրյերկոմը նշում է՝ բանվորական մատակարարման հարցերի նկատմամբ բացարձակ անբավարար ուշադրությունը Անդրկովկասի, ինչպես կուսակցական, նույնպես և խորհրդային, կոոպերատիվ և պրոֆեսիոնալ կազմակերպությունների կողմից։ Բոլորովին անբավարար են մոբիլիզացիայի յենթարկված ներքին պարենային ռեսուրսները և սպառկոոպերացիան չի կատարել՝ մերձքաղաքային տնտեսությունների ծավալման առթիվ տրված հանձնարարությունները։ Կոոպերացիայի ապարատը ախտոտված է խորթ տարրերով. գեղծումներն ու չարադործությունները, կոպիտ, անփույթ և անուշադիր վերաբերմունքը հանդեպ բանվոր սպառողների, դարձել են սովորական յերևույթ։ Մինչ այժմ բավարար չափով բանվոր-սպառողներին չի մոտեցված խանութային ցանցը, ցածր է՝ ժողովրդական սննդի ձեռնարկների կողմից բանվորական ընակչության ընդգրկումը, չխոսելով արդեն սննդի վորակի և բանվորների սպասարկման մասին։

Մոբիլիզացիայի չի յենթարկված և չի կազմակերպված՝ պրոլետարական կոոպերատիվ հասարակայնությունը, բանվորական մատակարարման գործի բարելավման խնդիրների շուրջը, վորի հետևանքով չի

կատարված կուսակցության կարևորագույն դիրեկտիվը՝ ռեալ աշխատավարձը 12 տոկոսով բարձրացնելու մասին։ Դեպի բանվորների կյանքի ամենակարևոր հարցերից մեկը—վորն ունի խոշոր անտեսական և քաղաքական նշանակություն—այդ խայտառակ անփութությունը, վկայում է՝ մեր ապարատների՝ մասսաների լարվածության և թանձրացած-խորացած բյուրոկրատացման, ինչպես նաև միանգամայն անհանդուրժելի, անպատասխանատվության մասին։

Անդրյերկոմը նշում է, վոր չնայած մատակարարման դժվարություններին, Անդրկովկասում յեղել են և կան անհրաժեշտ ռեսուրսներ, բանվորական մատակարարման զգալի բարելավման և ռեալ աշխատավարձի պլանների կատարման համար։ Բանվորական մատակարարման գործում յեղած ճեղքվածքների հիմնական պատճառը Անդրյերկոմը համարում է՝ մեր անտեսական, Առևտրի ժողկոմատի և կոոպերատիվ կազմակերպությունների դատապարտելի աշխատանքը և բանվորական մատակարարման հարցերում, բյուրոկրատական անփութությունը։

Նշելով ԱԿ(բ)Կ Բաքվի կոմիտեյի աշխատանքներում նկատվող բեկումը բանվորական մատակարարման բնագավառում, Անդրյերկոմն արձանագրում է, վոր Անդրկովկասի մյուս կազմակերպություններում դեռևս չի նկատվում վոչ մի զգալի առաջխաղացում՝ բանվորական մատակարարման բարելավման համար կուսակցության դիրեկտիվների կատարման ուղղությամբ։

Բանվորական մատակարարմանը՝ արդիֆինպլանների հաջող կատարման և պրոլետարական մասսանե-

րի կուլտուր քաղաքական մակարդակի բարձրացման այդ կարևոր ֆակտորին տալով կարևոր նշանակություն, կուսակցության Անդրյերկոմը բոլոր կուսակցական, խորհրդային, կոոպերատիվ և պրոֆեսիոնալ կազմակերպությունների առաջ դնում է՝ բանվորական մատակարարման գործում արագ և վճռական բեկում ստեղծելու խնդիրը։ Դրա հետ կապված, ՀԿ(բ)Կ Անդրյերկոմը վորոշում է՝

1. ա) Անմիջապես ձեռնարկել փակ բաշխիչների ցանց կազմակերպելուն այն հաշվով, վոր մոտակա յեռամսյակում արդյունաբերական ռայոնների բանվորության հիմնական մասսան ընդգրկվի նրանցում։ Փակ բաշխիչներ կազմակերպել առաջին հերթին՝ բանվորական ավաններում, բանվորական տներում, բանվոր-ընակչության կենտրոնացման կետերում, նույնպես և հենց ձեռնարկության տներում. ինչպես նոր կետեր բացելու, նույնպես և գոյություն ունեցող բաշխիչները վերակազմելու հաշվին։ Կուսակցական, խորհրդային, տնտեսական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները պետք է տեղերում սպառողական կոոպերացիայի ապարատին ցույց տան ամենալայն ոժանդակություն շենքեր գտնելու և սարքավորելու, փայատերերին՝ կետերին ամրացնելու գործում։

բ) Հաշվի առնելով, վոր բանվորական ռայոններում շենքերը հարմարություններ չունեն ունիվերսալ բաշխիչներ կազմակերպելու համար, սկսել նրանց կազմակերպումն, առաջին հերթին, ընդգրկելով սնունդամթերքները։

Սպառողական կոոպերացիային՝ ապահովել փակ բաշխիչները լավագույն աշխատողներով, ռացիոնալիզատո-

բական մինիմումի անհրաժեշտ ձեռնարկումներով (ապրանքների նախնական կշռումն, պատվերները), սիստեմատիկ սանիտարական հսկողությամբ և այլն։ Նախատեսվող փակ բաշխիչների ցանցի հետ մեկ տեղ, ներկա տնտեսական տարում ձեռնարկել բանվորական ռայոններում ունիվերսալ բաշխիչների կազմակերպմանը։ Զակսայուզին՝ քսան որյա ժամանակամիջոցում ՀԱՄԿ(ը)Կ Անդրյերկոմին ներկայացնել ընդանց կազմակերպման պլանը։

Ջ. Կոոպերացիայի պրակտիկ աշխատանքներում դասակարգային գծի խեղաթյուրումները, անշարժությունը, հնամոլությունը, բյուրոկրատիզմը, ցածր տեմպերը և կոոպերացիայի աշխատողների աշխատանքային դիսցիպլինայի ցածր մակարդակը հանդիսանում են հիմնական խոչընդոտը բանվորական մատակարարման բարելավման գործում։ Դրա հետ կապված, պրոֆ. կազմակերպությունների առաջ խնդիր է դրվում՝ վճռականորեն վերակառուցել իրենց մասսայական-դաստիարակչական աշխատանքը՝ խանութների, ճաշարանների, փուռերի և բանվորական մատակարարման ու ժող. սննդի այլ ձեռնարկությունների աշխատակիցների մեջ։ Պրոֆմիությունները պետք է նրանց մեջ լայն ծավալեն սոց. մրցումն ու հարվածայնությունը, արտադրական խորհրդակցությունները, բանվորական առաջարկների հավաքման աշխատանքը, պայքարը կորուստների դեմ, ապարատի եժանացման և ռացիոնալիզացիայի համար։ Անհրաժեշտ է լայն կերպով դնել սոց. մրցման պայմանագրերի կատարման ստուգումը, որինակելի աշխատանքի, դեպի հաճախորդը ուշադիր վերաբերմունքի համար՝ հարվա-

ծայինների մրցանակաբաշխության գործը և միաժամանակ լայն ծավալել հասարակական պայքարը՝ աշխատիպլինան խախտողների դեմ, ընկերական դատերի, մամուլի միջոցով և այլն։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել՝ մթերքների բաշխման տեխնիկայի ռացիոնալիզատորական ձեռնարկումներին։ Ինչպիսին են՝ ապրանքների նախնական կշռելուն անցնելը, շրջիկ առևտուրը, նախապես պատվերների ընդունումն, ապրանքները տուն ուղարկելը, որինակելի կետերի ստեղծումն, առևտրի ժամերի փոփոխումն՝ բանվոր փայատերերի պահանջի համաձայն, խանութային աշխատողների աշխատանքի ներքին կազմակերպվածության ավելի ճկունացումը (լինտային սիստեմա և աշխատողների փոխադրումն առանձին խանութների և կետերի միջև)։

3. Նշելով մթերային գրքույկներով կատարվող մեծ չարաշահությունները, նրանց բաշխման անբավարար տեխնիկան, և նրանց ոգտագործման կոնտրոլի անբավարար վիճակը, անցկացնել մթերային գրքույկների ընդհանուր ստուգումն ԲԳՏ բանվորական բրիգադների, «թեթև հեծելազորի» մասսայական մասնակցությամբ և ստուգվող տներում ապրող կուս. և ԼԿՑԵՄ կոլեկտիվների կողմից նրանց աշխատանքներին ոգնելու հիման վրա։ Մաքսիմալ չափով պարզեցնել գրքույկներ տալու և փոխանակելու պրոցեդուրան (կարգը) զուգակցելով այդպիսին բանվորական մասսայական խիստ կոնտրոլի հետ, քրեական պատասխանատվության կանչելով, ինչպես՝ անորինական կերպով մթերային գրքույկներ տվող, նույնպես և ստացող անձնավորություններին։ Միլիցիայի մար-

միններին՝ անհապաղ անցնել տնային գրքույկների ստուգմանը, իսկ ԲԳՏ մարմիններին՝ սիստեմատիկորեն կազմակերպել արշավներ և մթերային գրքույկների ոգտագործման ստուգումներ։

4. Մինչև մայիս չափով ընդլայնել հասարակական սննդի ձեռնարկությունների ցանցն, առաջին հերթին՝ փակ ճաշարանների, բաշխիչ կետերի և հիմնարկություններում՝ բուֆետների ու նախաճաշիկանոցների։ Բաց ճաշարանների ցանցը մոտեցնել բանվորական ռայոններին, նրանց մի մասին տալով փակ բնույթ, ինչպես առանձին աշխատավորներին, նույնպես և ամբողջ ձեռնարկություններին նրանց կցելու ճանապարհով 1930—31 տարում ձեռնարկել Անդրկովկասի խոշոր արդյունաբերական ռայոններում գործարան-խոհանոցների և մեխանիզացիայի յենթարկված ճաշարանների կառուցման, վոչ պակաս քան 300,000 ճաշ բաց թողնելու ունակությամբ։

Ժող. սննդի բաժիններին, տնտեսական և պրոֆեսիոնալ կազմակերպություններին՝ հասարակական սննդի բոլոր ձեռնարկություններում անցկացնել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ճաշարանների լայնացման, հերթապահական (посменный) սննդի կազմակերպման, ճաշերի բաց թողնման կետերի թվի ավելացման, աբոնեմենտային սիստեմը մտցնելու և սանիտարա-գիգիենիկ մինիմումի ապահովման (մթերքների պահպանումը, սննդի պատրաստումը, ճաշողներին սպասարկելը և այլն)։ Կուս. և ԼԿՅԵՄ բջիջներին, գործարկոմներին, կոոպ. բյուրոներին և մյուս հասարակական կազմակերպություններին — սահմանել՝ ճաշարանների վրա հատուկ կոնտրոլ, «Ելեկտրիկ» (Մոսկ-

վա) գործարանի փորձով հասնել ամենայն բարելավման՝ ինչպես ճաշերի վորակի, նույնպես և սնվելու պայմանների։ Ընդհանուր տիպի ճաշարանների հետ մեկ տեղ կոոպերատիվ որդաններն ամեն կերպ պետք է խրախուսեն և ծավալեն Բնակարանային Ակցիոներական Կոոպերատիվ Ընկերությունների շենքում ինքնուրույն ճաշարանների կազմակերպելու փորձը։

Ե. Բանվոր սպառողների մատակարարման ապարատի ռացիոնալիզացիայի արդելակներից մեկն էլ՝ սպառկոոպերացիայի առևտրա-արդյունաբերական առևտրա-տեխնիկական ցած բազան է։ Դրա հետ կապված անհրաժեշտ է.

ա) Առաջին հերթին ամրացնել կոոպերացիայի տրանսպորտային բազան, բեռնատար ավտոմոբիլներ ներմուծելով, մյուս տնտեսական կազմակերպություններին ունեցած ավտոմոբիլները վերաբաշխելով ի հոգուտ սպառկոոպերացիայի (մասնավորապես «Սայուզտրանսի» մեքենաները ձմեռվան հարմարեցնել) ընդլայնելով գուժտրանսպորտը և տրամվայները ներքաղաքային փոխադրություններին հարմարեցնելով։ Բաղխորհուրդներին՝ ապահովել սպառկոոպերացիայի պահեստները տանող ճանապարհների բարելավումը։

բ) Ծավալել խոշոր բանջարանոցային պահեստների և սառցարանների շինարարությունը։ Զակոյուզին՝ Առևտրի Ժողկոմատի հետ մեկ տեղ քսան որվա ժամկետում ներկայացնել այդպիսիների շինարարության պլանը։

Հաշվի առման յենթարկել այն բոլոր շենքերը, վորոնց հնարավոր է ոգտագործել վորպես մթերային պահեստներ։ Սպառկոոպերացիային՝ պրոֆ. միու-

թյունների հետ մեկ տեղ ծավալել աշխատանքը՝ մբ-
թերքները տներում—բանվորական ընտանիքներում
և բանվորական տներում կոլեկտիվ պահպանության,
ինչպես նաև ձեռնարկությունների պահեստներում
պահելու համար։ Սպառողական կոոպերացիային՝ տնտեսական
որդանների հետ մեկ տեղ ձեռք առնել անհրաժեշտ
միջոցներ, այդ մթերքները տունը հասցնելու գործը
կազմակերպելու։ Հատուկ հոգ տանել՝ ցածր վարձա-
տրվող աշխատավորների համար փայտը տուն ու-
ղարկելու, ամեն կերպ հատկացնելով՝ փայտյա պահեստ-
ները բանվոր սպառողներին։ ԲԴՏ մարմիններին՝ կազ-
մակերպել մասսայական սիստեմատիկ կոնտրոլ մեծ
պահեստների վրա, մթերքների հետ անտնտեսավարու-
թեան վերաբերվելու համար մեղավորներին յենթարկելով
ամենախիստ պատասխանատվության։

6. Ռեալ աշխատավարձի բարձրացման և բան-
վորական մատակարարման բարելավման համար մղ-
վող պայքարի նախապայմանն է՝ կոոպերատիվ հասա-
բակայնության կազմակերպումը։ Գոյություն ունեցող
վերստուգիչ հանձնաժողովները, կոոպ. հանձնաժո-
ղովները, բյուրոները և այլն աշխատում են առանց
վարեմ ղեկավարության, չիմանալով իրենց խնդիրները,
իսկ կոնտրոլի վարող որդաններ—խանութային
հանձնաժողովները, ամբողջ տարին չվերընտրվելով,
իրենք էլ միանում—խճճվում են կոոպերատիվ ապա-
րատի հետ և մասնակցում չարաշահումներին։
Անհրաժեշտ է նրանց աշխատանքում ստեղծել վճռա-
կան բեկում։ Անհրաժեշտ է հատկապես ձեռք առնել
վճռական միջոցներ, վերստուգիչ հանձնաժողովների
գործունեության աշխուժացման համար այն հաշվով,

վորպեսզի նրանք վերածվեն՝ լայն մասսայական բանվորական կոնտրոլի իսկական կենտրոններին։ Բոլոր բջիջներին, գործարկոմներին և տեղկոմներին՝ անհրաժեշտ է նրանց կազմն ամրացնել ավելի քան ձեռնահաս և ենտուզիաստ ընկերներով, լայն չափով առաջ քաշել այդ աշխատանքներում՝ կանանց և յերիտասարդության, ընդլայնելով նրանց պարտականությունների շրջանը, լայն կերպով կիրառելով շեֆության ձևերը կոոպ. խանութների և ճաշարանների նկատմամբ վոչ միայն ամբողջ ձեռնարկությունների, այլ և առանձին ցեխերի կողմից։ Վերատուգիչ հանձնաժողովները, կոոպ. բյուրոները, խանութային հանձնաժողովները, կոոպերատիվ լիազորները կոոպ. սեկցիաները վոչ միայն պետք է վերածվեն մասսայական բանվորական կոնտրոլի որգաններին, այլ և բանվորական մատակարարման գործի կազմակերպիչների (մերձքաղաքային տնտեսությունների, կաթնատնտեսական ֆերմերի, խոզաբուծարանների, փակ բաշխիչների, նորոգիչ և կարող արհեստանոցների, ճաշարանների բուֆետների ծավալման)։ Նրանք պետք է ռացիոնալիզատորական միջոցառումների անցկացնողները, կոոպերատիվ կադրերի պատրաստման գործի կազմակերպիչները լինեն։ Նրանց սիստեմատիկ փոփոխությունը, փայատերերի առաջ հաշվետու լինելը, ինչպես վերադաս կոոպերատիվ մարմինների, նույնպես և կուսակցական ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների կողմից նրանց վրա կենդանի ղեկավարությունը, սոց. մրցման և հարվածայնության լայն կիրառումը— կապահովի մասսաների ակտիվության մոբիլիզացիան, պարենային դժվարությունների հաղթահարման համար։

7. Սպառկոոպերացիայի ապրատի ամրացման և բանվորականացման նպատակով, Համկ(բ)կ Անդրյերկոմն առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպություններին, անհրաժեշտ քանակությամբ կուսակցական և պրոֆեսիոնալ աշխատանքների և Բաղվի փորձով հարյուրավոր ընկերներ՝ խորհուրդների անդամներից, կոոպ. ակտիվից, բանվոր կանանցից փոխադրել՝ սպառկոոպերացիայի ապարատը՝ ղեկավար աշխատանքի, պատրաստելով նրանց կարճատև դասընթացներում։

Ուժեղացնելով կոոպերացիայի աշխատանքի վրա բանվորական սիստեմատիկ կոնտրոլը, անհրաժեշտ է դադարեցնել սպառկոոպերացիայի աշխատողներին տեղահան անելը և վերջ տալ հետազոտման տենդին (горячка), որը խանգարում է աշխատանքին, թույլ չտալով վոչ մի հետազոտություն առանց ԲԳՏ թույլտվության։ Ուժեղացնելով կուս. կազմակերպությունների ոգնությունը կոոպերատիվ ապարատին, հաշվառման գործի դրվածքը բարելավելու աշխատանքը պլանայնորեն կազմակերպելու, ավելի վճռականորեն անցկացնելով միանձնյա ղեկավարության սկզբունքը—ղեկավար աշխատողների պերսոնալ պատասխանատվությունը նրանց հանձնարարած աշխատանքների համար, ավելի շատ ինքնուրույնություն կոոպերատիվ ստորին ողակներին՝ իրենց աշխատանքում։

Համկ(բ)կ Անդրյերկոմի կադրերի բաժնին՝ Զակոյուզի հետ մեկտեղ ապահովել՝ Անդրկովկասյան կոոպերատիվ ԲՈՒՀ-երի համար սոցիալապես կայուն կադրերի ընտրությունը (набор), գոյություն ունեցող կոոպերատիվ տեխնիկումների լայնացումը և վոչ Անդրկովկասյան կոոպերատիվ ԲՈՒՀ-երը ուղարկվող-

ների թվի ավելացումը։ Հատուկ ուշադրություն դարձնել՝ հասարակական սննդի կազրերի պատրաստման վրա, կուլինար (խոհարարական) ֆաբրիկների ցանցի լայնացման ճանապարհով և կազրերի պատրաստմամբ այնպիսի կոոպերատիվ աշխատանքի համար, որոնք ավելի շատ են ապահովված խորթ տարրերով (մասագործներ, բանջարաբուծներ և այլն)։ Դրա հետ մեկտեղ, առաջարկել Զակոյուզին կազմակերպելու կարճատև դասընթացներ, ներկայումս աշխատող կոոպերատիվ կազրերին վերապատրաստելու, բարձրացնելով նրանց հասարակական-քաղաքական մակարդակը և պրոֆեսիոնալ աշխատանքային վարպետությունը։

8. ա) Նպատակ ունենալով իջեցնել բարձր վերադիրները և վերադիր ծախքերը, որոնք թանգացնում են մթերքները, անցկացնել ապրանքատար ողակների վճռական կրճատումներ։ Զակոյուզին՝ խոշոր բանվորական կոոպերատիվների հետ (Բաքու, Թիֆլիս, Երևան, Գյանջա, Հենինական, Բաթում և այլն) հաստատել անմիջական կապ և ոպերատիվ ղեկավարություն։ Ստորին ցանցի բազմախանութային կոոպերատիվների խոշորացումը անցկացնել այն հաշվով, որ առնվազն ապրանքների 70 տոկոսը անմիջապես հասնի ստորին ողակին առանց միջանկյալ ինստանցիաներից անցնելու։ Վերանայել պահեստային ցանցը, նրա կրճատման և ապրանքների վերառաքումների լիկվիդացիայի տեսանկյունով։ Գյուղատնտեսական մթերքների նկատմամբ, մթերող կազմակերպությունների իրավասության թողնել միայն մթերման կետերի պահեստները այն հաշվով որպեսզի այդ կետերում մթերքները անմիջապես հանձնվեն սպառող-

ոպերացիայի բաշխիչ բաղաներին։ Անդր. ԲԳՏ՝ քան որյա ժամանակամիջոցում վերանայել՝ գյուղատնտեսական կոոպերացիայի գծով գոյություն ունեցող վերադիրները, նրանց կրճատման իմաստով։

բ) Բաղվի բանվորական կոոպերատիվին և Թիֆլիսի Ցերկոոպին մտցնել՝ բանջարեղեններ, մսի, ձվի և կաթնամթերքների հիմնական մթերողների թվի մեջ, հատկացնելով նրանց ռայոններ և ապահովելով մթերումները, դրա համար գոյություն ունեցող ապրանքային ֆոնդերից։

գ) Հաշվի առնելով սպառկոոպերացիայի սիստեմայի գծով անցնող ապրանքային ռեսուրսների միանգամայն սահմանափակ լինելը, գտնել անհրաժեշտ տուրքերի սիստեմայի գծով անցնող լայն սպառման ապրանքային վողջ կոնտինգենտը տրամադրել սպառկոոպերացիային, բանվորական մատակարարման ընդհանուր կոնտինգենտի մեջ մտցնելու համար։ Հանձնարարել Առևտրի Ժողկոմատին և Զակսոյուզին տասն որվա ժամկետում մշակել այս հարցը։

դ) Նկատի ունենալով, վոր սպառկոոպերացիայի հետ դուգընթացաբար առևտրով զբաղվող հասարակական կազմակերպություններին, ինչպիսին են՝ հաշմանդամների կոոպերացիան, «Ցերեխաների բարեկամների ընկերությունը», «Խուլերի և համրերի ընկերությունը», «Գորեց» ընկերությունը և ուրիշների ապարատը ապականված և սպեկուլյանտ տարրերով և գոյություն ունեն մի շարք խեղաթյուրումներ, պրակտիկ աշխատանքի անկազմակերպվածություն, առաջարկել ԲԳՏ մարմիններին քսան որվա ժամանակամիջոցում հետազոտել այդ կազմակերպությունների աշխատան-

քը և Անդրյերկոմին ներկայացնել առաջարկներ, ելբրանց հետագա աշխատանքների պայմանների մասին։

Ց. Նշելով դատական մարմինների կողմից ֆորմալ մոտեցումը և անթույլատրելի թույլ պայքարն ընդդեմ բոլոր տեսակի վատնումների, հափշտակումների, մասնավորին ապրանքները վերավաճառելու և այլն չարագործությունների ու ձեռնարկների բանվորական մատակարարման գործում, Հայ(ր)կկ Անդրյերկոմը առաջարկում է բոլոր հսկող և պատժող մարմիններին ուժեղացնել պայքարը կոոպերացիայում յեղած չարագործությունների դեմ, կազմակերպելով բողոքի գրքերի սիստեմատիկ ստուգումն, գործերի շուտափույթ քննումն, ցուցադրական դատեր, բանվորական մատակարարումը վիժեցնողների նկատմամբ գործադրելով ռևպրեսիայի ամենախիստ ձևերը։

Դատական և դատախազական մարմինների մի զգալի մասը ֆորմալ մոտեցումով թագցնելով բանվորական մատակարարման գործում պայքարի փաստորեն բացակայությունը, բոլոր տեսակի վատնումների, հափշտակումների, ապրանքները մասնավորին վերավաճառելու և այլն չարագործությունների ու ձեռնարկությունների դեմ, վկայում է՝ դատական և դատախազական մարմինների աշխատողների այդ մասի անընդունակությունը լուծելու բանվոր դասակարգի շահերի պաշտպանության համար մղվող պայքարի հիմնական խնդիրները։

Դատական և դատախազական մարմինների նման վերաբերմունքը համարելով աջ թեքման յերևան գալն այդ ապարատներում, առաջարկել հանրապետությունների կենտկոմներին վերանայել դատական մարմինների ղեկավար աշխատողների կազմը։

Նշելով հաճախակի կատարվող դեպքերը, երբ բանվորների համար նախատեսված մթերքները և ապրանքները վերցվում են և բաշխվում հենց իր՝ կոոպերատիվ սիստեմայի ներսում, կամ տրվում այլ սպառողների, գտնել անհրաժեշտ բանվորական մատակարարման նորմաների նման խախտման համար ամենախիստ պատասխանատվության յենթարկել կուսակցական և խորհրդային աշխատողներին, անմիջապես հանելով նրանց իրենց աշխատանքից և յենթարկելով խստագույն կուսակցական պատասխանատվության, մինչև իսկ կուսակցությունից հեռացնելը։

10. Հանձնարարել Անդր. Առևտրի ժողկոմատին, տնտեսական, պրոֆեսիոնալ և կոոպերատիվ կենտրոնների հետ մեկտեղ ապահովել նոր շինարարությունների անընդհատ մատակարարումը, այդ առթիվ ներկայացնելով Համ(բ)կ Անդրյերկոմին առաջարկներ։

11. Բանվորական մատակարարման գործում վճռական բեկումն առաջ բերելու և նշված միջոցառումները կիրառելու համար, հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 1 ը անցկացնել լայն մասսայական կամպանիա, բանվորական մատակարարման գործի բարելավման ուղղությամբ։

Համկ(բ)կ Անդրյերկոմի ագիտ. մասսայական բաժնին՝ մշակել և տեղերին տալ պրակտիկ ցուցումներ, այդ քարոզչության նախապատրաստման և անցկացման համար։

Մամուլին՝ ծավալել մասսայական կամպանիա, բանվորական մատակարարման բարելավման և ռեալ աշխատավարձի բարձրացման բոլոր կոնկրետ հարցերի շուրջը։ Անդրյերկոմի ագիտ. մասսայական բաժ-

նին, կուլտ պրոպին, Անդրպրոֆ. խորհրդի, Անդրաուտրի Ժողկոմատի և Զակոյուզի հետ մեկտեղ տեղական Պետհրատների միջոցով ազգային լեզուներով լույս ընծայել բանվորական մատակարարման հարցերի շուրջը պոպուլյար բրոշուրների սերիա, նրանցում լուսաբանելով Մոսկվայի և Լենինգրադի լավագույն ձեռնարկությունների դրական փորձը, բանվորական մատակարարման գործի բարելավման համար մղվող պայքարում։

ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՑԵՐԿՈՄ

A 1/4093

ՀԱՍԹ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈԼՈՐ ԿՈՒՍ. ԿԵՆՏԿՈՄՆԵՐԻՆ, ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԲՋԻՋՆԵՐԻՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՌԹԻՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՍԵՊՏԵՄԲ. 24-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանվորական մատակարարումը բարելավելու միջոցների մասին, Կուսակցության Անդրյերկոմը սեպտեմբերի 24-ին ընդունել և կարևորագույն վորոշում։

Այդ վորոշումն ընդգրկում է՝ մոտակա խնդիրների հիմնական ընդգծումը, վորոնց, անհապաղ կիրառումը կապահովի բանվորական մատակարարման գործում յեղած ճեղքվածքների լիկվիդացիայի համար մղվող պայքարի հաջողությունը։

Նշված քսանորյակը—հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 1-ը—ծավալվելով վորպես մասսայական մարտական կամպանիա, այդ կարևորագույն ճակատում պետք է ստեղծի վճռական բեկում։

Բոլոր կուսակցական կազմակերպությունները, սկսած կենտկոմներից և վերջացրած բջիջներով, պրոֆմիութենական, կոմյերիտական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունները անհապաղ պետք է ձեռնարկեն՝ Անդրյերկոմի վորոշման և մշակեն գործնական միջոցառումներ, այդ վորոշումը կյանքում կիրառելու համար։

Կամպանիան հաջողությամբ անցկացնելու, բոլոր կազմակերպությունների ուժերը համախմբելու և լայն

մասսաների ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկելու համար, անհրաժեշտ է՝ 20-որյակի անցկացման նպատակով բոլոր արդյունաբերական ռայոններում կուսակցական կոմիտեների ագիտ-մասսաժիններին կից կազմակերպել շտաբներ, Կուսկոմի, պրոֆմիությունների, կոմսերիամիության, ԲԳՏ, կոոպերացիայի, խորհուրդի և տնտեսական կազմակերպությունների ներկայացուցիչներից, այդ ընկերներին կամպանիայի անցկացման ժամանակամիջոցում ազատել այլ աշխատանքներից։

Մինչև կամպանիայի սկսվելը, շտաբները պետք է մշակեն աշխատանքների կոնկրետ պլաններ, կապվեն ձեռնարկությունների հետ (բջիջների, գործարկոմների, կոոպերյուրոների), նախատեսված միջոցառումների պրակտիկ կիրառմանը մասնակից դարձնելով բանվորական լայն շրջաններին, բանվոր կանանց և բանվոր յերիտասարդության։

Նպատակ ունենալով բանվորական բրիգադների խնդիրները մաքսիմալ չափով պարզեցնել և կոնկրետացնել, շտաբի ամբողջ աշխատանքը պետք է բաժանել մի քանի սեկտորների, Համկ(բ)ի Անդրյերկոմի վորոշման հանգույցային հարցերի ուղղությամբ։

Հարցերի առաջին խումբ.—Տոնության ցանցի մոտեցումը բանվոր սպառողներին, փակ բաշխիչներ, ռացիոնալիզատորական միջոցառումներ։

Յերկրորդ խումբ.—Հասարակական սննդի հարցեր։

Յերրորդ խումբ.—Առևտրա-տեխնիկական բաղադրիչ հարցեր (տրանսպորտի դրությունը, պահեստների դրությունը, նոր շենքերի հայտնաբերումն, տներում մթերքների պահպանության կազմակերպումն և այլն)։

Չորրորդ խումբ.—Սպառակոոպերացիայի արտադրական և մթերումային գործունեությունը (մերձքաղաքային տնտեսություններ, կաթնատնտեսական ֆերմեր, բանջարեղենների մթերում, անուղղակի արտադրություն, խոզաբուծարաններ, և այլն)։

Հինգերորդ խումբ.—Մթերային դրքուլկների ստուգումն, նրանց դրման տեխնիկայի պարզեցումն, նրանց ոգտագործման վրա բանվորական մասսայական կոնտրոլի ուժեղացումն։

Վեցերորդ խումբ.—Մասսայական աշխատանքի հարցեր (դաստիարակչական աշխատանք խանութների և ճաշարանների աշխատանքների մեջ, սոցմրցման ծավալումն, բանվորական առաջարկների հավաքումն, բանվորական մատակարարման գործում լավագույն ձեռնարկության համար մրցման կազմակերպումն, հասարակական սննդի ուղղությամբ կոոպերատիվ հասարակայնության որգանների աշխատանքների աշխուժացումն, նրանց խնդիրների պարզեցումն, շեֆության կազմակերպումն, մամուլի աշխատանքը, ցուցադրական դատերի կազմակերպումն և այլն)։

Առաջարկվող բաժանումն ըստ սեկտորների կրում է որիենտիր բնույթ և կարող է փոփոխվել ու ավելի քան պարզեցվել յելնելով տեղական պայմաններից։

Աշխատանքին մասնակից դարձվող բոլոր ընկերները պետք է ունենան ճշգրիտ և կոնկրետ հանձնարարություններ, վորի համար շտաբներն ըստ յուրաքանչյուր սեկտորի բրիգադների համար պետք է կազմեն աշխատանքի որինակելի պլաններ և մինչև աշխատանքների սկսվելը, նրանց հետ մեկտեղ անցկացնել լայն խորհրդակցություն—կոնֆերենցիաներ։

Իրենց աշխատանքներում բանվորական բրիգադները վոչ մի դեպքում չպետք է սահմանափակվեն միայն հետազոտություններով, այլ տեղական կազմակերպություններին ցույց տալ ամենայն ոգնություն, վերացնել տեղերում հայտնաբերված թերությունները, կազմակերպել մասսաները, բանվորական մատակարարման գործում ճեղքվածքները լիկվիդացիայի յենթարկելու համար, նախապատրաստել և առաջադրել մի շարք նոր միջոցառումներ, վորոնք կլավացնեին աշխատանքը։

Այս կամպանիայի անցկացման կարևորագույն խնդիրները բաժին են ընկնում մամուլին։ Ցերևան հանելով կոոպերացիայի աշխատանքներում գոյություն ունեցող բոլոր տեսակի թերությունները, խայտառակությունները և չարաշահությունները, դրա հետ մեկտեղ մամուլը պետք է զբաղվի բանվորական մատակարարման բարելավման պրակտիկ հարցերով, բանվորական առաջարկների հավաքման կազմակերպմամբ, դրական փորձի լուսաբանմամբ։ Մամուլը ըշտաբին պետք է ոգնի, նրա աշխատանքի կազմակերպման մեջ, տեղավորելով բանվորական բրիգադների աշխատանքների մասին տեղեկություններ, հրավիրելով կոնֆերենցիաներ, կազմակերպելով մրցություններ և տեսներ։

Մասնավորապես յերկրային որգան «Զարյա Վոստոկային» անհրաժեշտ է՝ Զակսոյուզի հետ մեկտեղ անցկացնել Անդրկովկասյան կոնկուրս, լավագույն կոոպերատիվ կետի և ձեռնարկության լավագույն փակ ճաշարանի համար։

Կամպանիայի ընթացքում հատուկ ուշադրու-

թյուն պետք է դարձվի պրոլետարական կոոպերատիվ հասարակայնության աշխուժացման, կոոպերատիվ որդաններում աշխատողների կազմի ամրացման, մասսայական աշխատանքի վրա կենդանի ղեկավարության ուժեղացման, կոոպերատիվ կետերի, ճաշարանների, մերձքաղաքային տնտեսությունների վրա ձեռնարկությունների շեֆության ծավալման։ Անհրաժեշտ է նաև կոոպերատիվ կազմակերպությունների աշխատանքներում լայն ծավալել՝ սոց. մրցումը, պայմանագրերի կիրառման ստուգումը և նորերի կնքումը։

Կուսակցական կոմիտեներին անհրաժեշտ է ձեռնարկել Ցերկրային Կոմիտեյի դիրեկտիվի կիրառումը, կոոպերատիվ ապարատը փոխադրելով կուսակցական և պրոֆեսիոնալ աշխատանքներին, նաև առաջ քաշելով դրա համար բանվորներին, նրանց կանանց, կոմյերիտականներին և խորհուրդների պատգամավորներին։

Հաշվի առնելով նոր շինարարությունների առանձնապես անբավարար մատակարարումն, առաջավոր բանվորական կոոպերատիվներին անհրաժեշտ է հասարակական բուքսիրի վերցնել հետամնաց կոոպերատիվներին։

Բոլոր ագիտ-մասսաժիններին—կամպանիան ապահովել՝ բանվորական մատակարարման առթիվ տեղական ագիտացիոն-բացատրական նյութերով։

ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՑԵՐԿՈՄ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038783

2054

6; A I/4093

ԳԻՆԸ 1 Կ.